ՆՈՐ-ՕՐ

№ 107 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 5 Յուլիսի 1888 Երեքշաբթի 5 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 107

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոր՝ 6 րուբլի, երեք ամսոր՝ 3 ր. 50 կ., ամսոր՝ 1 ր. 50 կ., հասով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թեֆլիսում մխիթարեան վանքում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուրբերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաչը 2 կ., բեկտիների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Շուշեցիների կեանքից։

Թղթակցութիւններ.—Ղզլար։ Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն Լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

«Նոր-Դար»-ի պատասխանները։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Նոր-Դար»-ի անցեալ համարում հրատարակելով ներքին առաջին փոխառութեան յուլիսի մէկի վիճակահանութեան միջոցին գլխաւոր գումարներն տանող տոմսերի թուահամարները, բայց էր թողած երկու տոմսերի թուահամարները, որովհետև դրանք սխալ հեռագրուած լինելով, ուղղելու հարկ կար. այժմ մեզ հեռագրում են, որ այդ տոմսերքն են 7712—16 և 38—41, որոնք հինգհազարական րուբլի են տարել։

—

ԴԱՐԱՁԻԶԱԳԻՑ մեզ հաղորդում են.—Յայտնի աւազակապետ Քեսարամը իւր փոքրիկ խումբով Այրիվից գալով, Դարաչիչագի Ազմաղան սարով և Դըզմաչէն գիւղի միջից անցնելիս, մի քանի ձիաւորները հասան եւևից և սկսուեց հրացանաձգութիւն, որի միջոցին վիրաւորուեցաւ Քեսարամի խմբից մի քուրդ, իսկ միւս կողմից՝ երկու ձի։ Քեսարամ վերադառնալով Մէյդան-Օբան, այնտեղ սպանեց մի հարուստ մահմեդականի և անցաւ դէպի անտառ։

—

ԷՁԱՆԱՆԻՑ.—Յունիսի 9-ին կրկին հեղեղ եկաւ։ Հեղեղն այնքան սարսափելի էր, որ մարդ նրա աղաղակից միայն սոսկում էր։ Հեղեղն գոհ գնացին բազմաթիւ կամուրջներ, ջրաղացներ, վրաններ, կենդանիներ և շատ էլ մարդիկ. ինչպէս լսում ենք, Օնջանցից 50 տուն գոհ է գնացած այդ հեղեղին։ Յունիսի տասին հեղեղ եղաւ նոյնպէս Էձանանի միւս մասում, և, ինչպէս լսվում է, արտերին բաւականին վնաս է հասած։ Այսօր, յունիսի 20-ին վերջապէս վերջ եղաւ հեղեղներին։ Մայիսի 2-ից սկսուած անընդհատ, ամեն օր տեղացող անձրևներն յունիսի 19-ին վերջացան։

—

Մեր ընթերցողների ուշադրութիւնն դարձնում ենք սոյն համարում Պետերբուրգից հրատարակուած հեռագրի վրայ, որ վերաբերում է զինուորական ծառայութեան տարեթիւին։

—

Մեզ հաղորդում են.—Կիրակի, յուլիսի 3-ին Բագուից եկող երկաթուղու գնացքն Աղստաֆա կայարան հասնելով, երևաց, որ պօստային վագօնը կողոպտուած է։ Ասում են, որ կորել է փողի պարկի մէջից 80,000 ր. գումար։

Նոյն գնացքը նոյն օրը իւր տակովը արեց Ճանապարհի վրայ ծառայող սլաքապահներից մինին. խեղճի ձեռները ու ոտները կտրվում են և նա չուտով մեռնում է։

—

Շաբաթ օր, յուլիսի 2-ին, երկաթուղու գնացքը դուրս գալով կօրուէյտի ներքնուղուց, տակով է անում մի բանուորի և անկերպարան մսակոյթ է դարձնում նրան։

—

ՆՈՐԱՇԷՆԻՑ.—Պարէզների ֆինանսիները կրկին սկսան երեց սերտագործութիւնները։ Յունիսի 25-ին Ա. Թումանեանի պարէզը բնաջինջ են արել. գիւղացիները հանրագիր են պատրաստում գիւղից երկու տուն վռնդելու համար։ Եթէ այդ գլուխ գայ, գուցէ ազատուին անդադար կրկնուող աւազակութիւններից, մարդասպանութիւններից, այգիները կտրատելուց և այլն և այլն։

—

Կ. Պօլսի Թերթերում կարդում ենք.—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ երէկ Ելմտական նախարարութեան հաղորդուեցաւ կայս. Իրատէ մը որ կը հրամայէ 1000 դրուշի ամսաթոշակ մը յատկացնել Պատրիարքական նախորդ փոխանորդ Րուսճուքեան Գեր. Գէորգ վարդապետին։

—Զնքուշի վանահայր Աբժ. Տ. Մինաս վարդապետ յունիս 5 ամսաթուով հեռագիր մը ուղղած է ի Պատրիարքարան, ծանուցանելով թէ վիճակին Ատիշ գիւղի ժողովուրդը տրամադիր է խմբովին այլուր գաղթել։

Սոյն խնդրոյն համար մայրաքաղաքս գտնուող 300 հոգւոյ չափ Զնքուշցի աղգայինք երէկ բազմաստորագիր հանրագրութեամբ ի Պատրիարքարան դիմելով, Գեր. Պատր. Փոխանորդ Հօր ներկայացան իրենց վիճակին դարմանը խնդրելու։

Գեր. Փոխանորդ Հայրն զժողովուրդն հայրաբար յորդորեց և մխիթարեց, և Ս. Պատրիարքի հրամանաւ՝ հեռագիր մ՝ ուղղեց ի Զնքուշ, որով կը յուսադրէ գԱբժ. Մինաս վարդապետն, զեկուցանելով միանգամայն թէ ժողովրդեան խնդիրն ընդ փոյթ պիտի ներկայացուի իբ. Դուռն յաւուրդ Թագրիւով մը։

—Մանիսայի ազգայնոց կողմէ երկու հարիւր ստորագրութեամբ գիր մը եւ կած է տեսոյ ազգային վարչութեան՝ երկու ծանօթ քահանայներու նոյն տեղէ հեռացումը խնդրելու համար։ Ինչպէս յայտնի է տարի մ՝ անցաւ ուայս խեղճերը չեն քահանայագործեր և ոչ ալ եկեղեցի կը մտնեն, ու տակաւին կը մնան իրենց տուն հանդարտ և անգործ։

—

Կովկասում, գարնան քացուելուց յետոյ աւելի և աւելի շատանում են մարդասպանութիւնները, աւազակութիւնները, կողոպուտները... Թիւը. ամեն օր տեղական Թէ հայ և Թէ մեսրոպեան Թերթերում կարելի է առատ նիւթ ունենալ այդ մասին։ Այսպէս օրինակ, հենց Նուխում, յունիսի 17-ին, օրը ցերեկով, մի Թուրք իւր երկու օրդիների հետ սպանում է քաղաքային հեռագրատօստատին չինուհեան կողքին, մի ոստիկանի, որովհետև նա չանդգնել էր յիշեալ Թուրքի օրդիներին չանդիմանել, Թէ նրանք ազմուկ են բարձրացնում քաղաքում իրենց արբած դրութեամբ։ Ցանցաւորներն ապատ ման են գալիս, իսկ բուն սպանողը,—Թուրքի փոքր որդին փախստական է ընկել։ Այդ դէպքից մի փոքր յետոյ, Նուխուց 30 վերստ հեռու գտնուող Ջաֆարօվատ գիւղում մի Թուրք մահեղով մի հայի խանութի, նրանից ուզում է 30 կ. պարտք. վերջինս մերժում է առարկելով, Թէ ուզող Թուրքն երեն 60 կ. էլ պարտք ունի և դեռ չէ վճարել։ Թուրքն այդ խօսքի վրայ խենթարով Թափում է նրա փորը։ Ցանցագործը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս Թերթերին, անհետացել է։

—

ԶԱՆԳԵԱԶՈՒՐԻՑ.—Գանը մտքերի մէջ է խորասուզում մարդիս Այուղուալի գիւղի Թշուառութիւնը։ Այդ գիւղն այժմ քարուքանդ է արած մի գիշերուայ մէջ, որի միջոցին մի քանի մարդ էլ կոտորուած են, կայք ու գոյք յափշտակուած, տուն ու տեղ քանդած, անտառի սէջ խաղողի և Թթենու այգիները կոտորած, գետնին հաւասարած են, այնպէս որ մի ամիս առաջ այս գիւղը տեսնող մարդն այսօր իւր աչքերին չի հաւատայ, որ ինքն Այուղուալի գիւղն է տեսնում։

Գիւղացիները քաղցած ծարաւ, անտուն անտիրական մնացած, հայ են մուրում, իսկ աւազակները—հարուստ քուրդ բէկերը, որոնց ձեռքով գործուած է այս չարագործութիւնը, ապահով՝ հանգիստ իրենց քէֆն են քաշում։

—

Մենք հաղորդել էինք իւր ժամանակին, որ երկրիս կառավարչապետ իշ. Դոնդուկով-Կօրսակովը կովկասի պետնուորա-պատմական մուզէումի համար երկու պատկերներ էր պատուիրել Ց. Այվազովսկուն նկարելու։ Այդ երկու պատկերներն էլ արդէն պատրաստ են և ի ցոյց դրուած են Թէոդոսիայում, ուր գտնվում է ներկայումս հայազգի նշանաւոր նկարիչը։ Նկարներից մինը ներկայացնում է Նիկողայոս կայսրի և Թագաժառանգի Գեղեցիկ գուրս գալը սաստիկ փոթորկի ժամանակ։ Նրանք նստած են «Сѣверная Звѣзда» նաւի վրայ. գիկի մօտ նստած է գրաֆ Թ. ե. Գէյդէն. ափին սպասում է տեղական զօրքը։ Երկրորդ նկարը ներկայացնում է 1839 Թուին ռուսաց զօրքի Սուրաշի դուրս գալը (Գրիմում, Սև Ծովի ափին, որ յետոյ վերակոչուեց Գօլովինի փօրտ)։ Եօթ հատ 80 Թնդանօթանոց նաւեր մօտենում են ափին խիստ հրաձգութեամբ, որոնց առաջնորդն է Նախիմով. զօրքը նաւակներով շտապում է ափ դուրս գալ. Ծովը խաղաղ է. երևում են այդտեղ Ն. Ն. Բաեվսկին, Ծովակալ Լազարեվը, Ֆելիպսոնը, Կրաբբէն. նրանց մէջ էլն և մի քանի դէկաբրիստները՝ որպէս հասարակ զինուոր։ Երկու նկարներն էլ մեծ են և գեղեցիկ։ Վերջի նկարն առաւելութիւն ունի առաջինից միայն նրանով, որ, «Нов. Вр.»-ի ասելով, Այվազովսկին ինքը ականատես է եղել նկարած դէպքին։

—

Հինգշաբթի, յունիսի 30-ին, Քուրը ափ էր հանել մի դիակ, որ մի քանի ժամանակ մնալուց յետոյ, կրկին անհետացաւ Ջրի ալիքների մէջ։

—

Ինչպէս տեղեկանում ենք, Թարիօվի Համալսարանի բժշկապետ դօցենդ Ա. Շլեֆանը յունիսի 23-ին հաստատուած է էկստրաօրդինար պրոֆէսսոր ներքին հիւանդութիւնների—экстраординарный профессоръ по каѳедрѣ патологіи и терапіи։

—

Իւր ժամանակին մենք հաղորդել էինք, Թէ ինչպէս քաղաքիս ամենանշանաւոր մասում, Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, երեկոյեան միջոցին, իւր ամուսնու տանը սպանուած գտնուեցաւ քաղաքային բաժնի վերահսկողի (օկօլօդօչնը) նադեժդաստէ) կինն Օլգա Պինամծդարօվը. այդ գործի առիթիւ, ինչպէս յայտնի է, դատաստանի մատնուած էին սպանութեան մէջ մեղադրուելով երկու հոգի, մինը հայ և միւսը մի լէգգի։ Դատաստանի մատնուած էր և սպանուածի ամուսինը՝ որ մեղադրվում էր առաջին երկու հոգուն սպանելու դրդելուն համար։ Երեք մեղապարտներին էլ յանձնուած է մեղադրական Ճառը. նրանք յունիսի 30-ին կոչուած էին դատարան՝ նրանց կարծիքն իմանալու և բացի դատաստազի հրաւիրած վկաներից՝ ուրիշ վկաներ էլ կանչելու համար։

Պինամծդարօվը, «Тиф. Лист.»-ի ասելով, առաջ է բերում մի շարք վկաներ, ապացուցանելու համար, Թէ իւր յարաբերութիւնն իւր կնոջ հետ այնքան լաւ են եղել, որ ոչինչ առիթ չէին տալ յանցանք գործելու։

—

Շաբաթ օրը, յուլիսի 2-ին, Թիֆլիսի փողոցները մաքրող բանուորները մօտ 100 հոգի գործադուլ եղան՝ պահանջելով իրենց ամսականն աւելացնել, որ 12 ր. է։ Ինչպէս լսվում է, նրանք գանգատուել են և իրենց վերակացուներից, որոնք նեղացնում են իրենց Թէ նիւթապէս և Թէ բարոյապէս։ Բանուորների վարձը բարձրացրել են, ինչպէս լսվում է, 13 ր. ամսական։

—

Անդրկովկասեան Շէյխ-իւլ-իսլամ Ախունդ Միրզա-Չասան Բայբուր հինգշաբթի, յունիսի 30-ին երկաթուղու գնացքով երեկոյեան ուղևորեցաւ դէպի Երևան, ուր պէտք է քննէ իւր իշխանութեան տակ եղած ժողովրդի գործերը։ Շէյխ-իւլ-իսլամը, «Тиф. Лист.»-ի ասելով, երկրիս կառավարչապետ իշ. Դոնդուկով-Կօրսակովի Թոյլտուութեամբ, պէտք է քննէ ամբողջ Անդրկովկասում իւր հօտի գործերը։

—

ՂԱՓԱՆԻՑ.—Յունիսի 25-ից կրկին եղանակները խառնուեցան. անձրևները տեղում են, գիւղացիները յուսահատուած՝ իրենց գլուխն են լաց լինում. բնութեան այս հարուածը՝ առաջիկայ տարուն սով է գուշակում։

—

Շաբաթ օր, յուլիսի 2-ին, ինչպէս ամեն տարի սովորութիւն է, Թիֆլիսի Ֆրանսիական գաղթականները տօնեցին իրենց ազգային տօնը քաղաքիս «Եւրոպա» կոչուած այգում։ Այգին և բոտանիզը գարդարած էին գոյնզգոյն լապտերներով, դրօշակներով, ծաղիկներով, կանաչով, որոնց մէջից երեւում էր Ֆրանսիական Հասարակապետութեան պատկերը՝ Չահիլ, առոյգ և գեղեցիկ կնոջ կիսաբաճանը։ Գիշերուայ ժամը 11-ին այգում սարքեցին սեղանը, որի միջոցին կենաց բաժակներ առաջարկուեցան Թագաւոր Կայսրի, Ֆրանսիայի Հասարակապետութեան նախագահի, Թիֆլիսի Ֆրանսիական հիւպատոս էչէնի և ուրիշների համար։ ընթրիքից յետոյ պար եկան, հրաճաշուելիները սկսին։

—

Իւր ժամանակին մենք հաղորդել էինք, որ Մոսկվայի պօստատնից ոմն կնօպի կողմից ուղարկուած՝ 120,000 ր. արժողութեամբ արժէթղթեր պարունակող մի ծրարի անհետանալու մասին, որի համար մեղադրվում էին Գեղեխուդով, Մախրօվսկի և Պանով, բայց որոնց Մոսկվայի նահանգական դատարանն արդարացրել էր։ Գործը նոյն դատարանի դատախազի բողոքով անցնելով սենատ, այդ որոշումը բեկուեց և առանձին կարգադրութիւն եղաւ գործը քննել նոյն Մոսկվայի նահանգական դատարանում՝ միայն ուրիշ կազմութեամբ։ Այժմ ստացուած տեղեկութիւններից երևում է, որ Մոսկվայի նահանգական դատարանն երկրորդ կազմութեամբ քննելով գործը, Գեղեխուդովին Ճանաչել է մեղաւոր 120,000 ր. արժէթղթերը յափշտակելուն համար, Մախրօվսկին ներողամտութիւն է ստացել, իսկ Պանովին մեղադրվում է յանցագործութիւնը՝ առանց շահասիրական դիտումներ ունենալու՝ ծածկելու համար, բայց Գեղեխուդովն ու Մախրօվսկին մեղաւոր Ճանաչուած չեն կեղծարարութեան մէջ։ Դատարանն որոշել է երեքին էլ գրկելով առանձին իրաւունքներից, Գեղեխուդովին և Մախրօվսկուն ուղարկել Տօրօլեան նահանգը՝ առաջինին նախապէս մի տարի բանտում պահելուց յետոյ, իսկ Պանովին ուղարկել Օլօնէցեան նահանգը՝ կնօպի գրամական պահանջին բաւականութիւն տալու որոշում է եղած։

—

ԷՁԱՆԱՆԻՑ Մ. Ա. գրում է.—Այսօր, յունիսի 29-ին քննութիւն էր նշանակուած՝ Ղաթարու սղնձահանքը արքունի գործն դարձնելու և կամ չդարձնելու մասին։ Տասն երկու հոգի երդումով ցոյց տուին, որ արդարև նրանք այդ տեղը Սուլթանլարների իշխանութեան տակ են տեսել։ Մուսա-բէկը յուսահատուած է։

—

Բերլինի անտրօպօլօգիական ժողովի վերջին նիստում պրօֆէսսոր Բրուգչ-վաշան, որ գերմանական գիտնական անձն է և գտնվում է Թիւրքական ծառայութեան մէջ, «Нов.»-ի ասելով, զեկուցում է կարդացել 1884—1885 Թուերին Կովկասում իւր կատարած փորուածքների միջոցին գտած անդրպատմական առարկաների, քարերի և ուրիշ հնութիւնների մասին։

—

Շաբաթ օր, յուլիսի 2-ին Սամարայի նահանգից եկած գաղթականների մի խումբ, որ բաղկացած էր 30—35 հոգուց, Թիֆլիսից անցնելով ուղևորեցաւ Ղարսի նահանգը։ Գաղթականները, ինչպէս և մինչև այժմ գաղթողները, իրենց ճանապարհը չարու-

ՊՈՒՐԱԿԱՆ ՎԱՃԱՌՔԻ

ՊԱՐՈՆ, ՀՈՐԵՂԲՈՐ ԱՐՄԵՆ ԱՂԱՅԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ինչպես, հոկտեմբերի 12-ին, հրապարակ եկավ, որ Արմեն Աղայանի հարսանիքը պիտի լինի հոկտեմբերի 14-ին, Ս. Աստվածածին եկեղեցում: Հարսնացուն՝ Մարիամ Ալեքսանյանի դուստրը, Ալեքսանդրապոլի ամենահարուստ ընտանիքներից մեկի զավակը: Ամուսնությունը պիտի կատարվեր Ալեքսանդրապոլում, որովհետև հարսնացուն այնտեղ է ծնվել և մեծացել: Հարսանիքին հրավիրված էին Ալեքսանդրապոլի ամենանշանավոր անձերը, ինչպես նաև Թիֆլիսից, Բաքվից, Նոր Նախիջևանից և այլ քաղաքներից: Հարսանիքի համար պատրաստվում էին մեծ շուքով, ինչպես հարուստ ընտանիքի հարսանիքին վայել է: Ամուսնության պսակը պիտի կատարեր Գևորգ Կոստանդյանցը, որ Արմեն Աղայանի ուսուցիչն է եղել: Հարսանիքի ընթրիքը պիտի տրվեր Ալեքսանդրապոլի «Գրեճոյ» ռեստորանում, որ ամենամեծն է քաղաքում: Ընթրիքին պիտի մասնակցեին 300 հոգի: Ընթրիքի ծախսը հաշվում էին 5,000 ռուբլի: Ընթրիքի ժամանակ պիտի նվագեր Ալեքսանդրապոլի զորամասի նվագախումբը: Հարսանիքի համար պատրաստվում էին նաև ձիարշավներ, որոնց համար հրավիրված էին Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի ամենանշանավոր ձիավարները: Ընդհանրապես հարսանիքը պիտի լիներ ամենահարուստ և ամենաշքեղ հարսանիքը, որ տեսել է Ալեքսանդրապոլը: Ինչպես հայտնի է, Արմեն Աղայանը ունի 3,910 դեսյատին հող, որի 1/3-ը ինքնուրույն է տնօրինում: Նրա տարեկան եկամուտը հասնում է 5,300 ռ. 77 կոպեկի, որ ծնվել է 1891 թ. մարտի 4-ին: Նրա մայրը՝ Մարիամ Ալեքսանդրի Աղայանը, 1-ին գիլդիայի առևտրական է: Նրա հայրը՝ Ալեքսանդր Աղայանը, մահացել է 1886 թ. մարտի 21-ին, 72 տարեկան:

ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Փողոցների հարսանիքը պիտի լինի հոկտեմբերի 23-ին, Հարության կիրակի օրը: Հարսնացուն՝ Ֆրոսյա Ֆրոսյանի դուստրը, Ֆրոսյանների ընտանիքից է: Հարսանիքը պիտի լինի Ֆրոսյանների տանը, որ գտնվում է Ֆրոսյանների փողոցում: Հարսանիքին հրավիրված են Ֆրոսյանների ամբողջ ընտանիքը, ինչպես նաև Ֆրոսյանների բոլոր բարեկամները: Հարսանիքի համար պատրաստվում են մեծ ուրախություն: Հարսանիքի ընթրիքը պիտի տրվի Ֆրոսյանների տան բակում, որ շատ ընդարձակ է: Ընթրիքին պիտի մասնակցեն 200 հոգի: Ընթրիքի ծախսը հաշվում են 1-ից մինչև 2 հազար ռուբլի: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ձիարշավներ, որոնց համար հրավիրված են Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի ամենանշանավոր ձիավարները: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ֆեյերվերքներ, որոնց համար հրավիրված է Թիֆլիսի ֆեյերվերքների ընկերությունը: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ հագուստներ, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ կահավորություններ, որոնք պատվիրված են Վիեննայից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ ուտելիքներ, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ խմիչքներ, որոնք պատվիրված են Ֆրանսիայից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ զարդեր, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ ծաղիկներ, որոնք պատվիրված են Նիցցայից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ կոշիկներ, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ գլխարկներ, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ ձեռնոցներ, որոնք պատվիրված են Փարիզից: Հարսանիքի համար պատրաստվում են նաև ամենաշքեղ գուլպաներ, որոնք պատվիրված են Փարիզ

քաղաքի պարտականութիւնը չէ օր առաջ մտածել այդ մասին։

Հետևանքների մասին կը հաղորդեմ։

Գ. Առտամ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԵՐՄԱՆԻԱ.—Ներքին գործերի մինիստրութեան ատագ-քարտուղար Գէօֆֆուրտ այդ մինիստրութեան կառավարիչ նշանակուելը ամենից աւելի վատ ազդեցութիւն է արել պահպանողականների վրայ, որոնք կ'ուզային նախկին մինիստր Պուտականմէրը կրկին մինիստր նշանակուելուն։ Իսկ ապատամիտ մամուլն առանց թագցնելու իր գոհունակութիւնը խօսում է այդ նոր մինիստրի մասին։ Նոր մինիստրը ծնուած է 1830 թուին և ներքին գործերի մինիստրութեան մէջ 18 տարի է, որ գործում է։ Նա Գերմանիայում յայտնի է և օրսէօ քաղաքային ու գիմնազիալին ֆինանսների գիտակ անձն։ Պատմում են, որ նոր կայսրի պահական ճառը կազմել է Գէօֆֆուրը։

—Գերմանական վիլհէլմ II կայսրը սեպտեմբերին կ'ուղևորի Վիեննա՝ Ֆրանց-Յոզէֆ կայսրին այցելելու համար։ Վիեննայում էլ ասդէն սպասում են նրան։

—«Nouvelle Revue»-ի մէջ «Պետական գաղտնիք» անունով մի յօդուած է հրատարակուած, որի մէջ հեղինակը հաստատում է, որ Գերմանիան դաշնակցութիւն է հաստատել և Րումինիայի ու Բէլգիայի հետ։ Յօդուածագիրը գրաճ վաստիկին Րումինիայի մասին հարևանցօրէն է յիշատակում միայն, բայց Բէլգիայի հետ ունեցած դաշնակցութեան մասին խօսում է աւելի ընդարձակօրէն և առաջ է բերում մանրամասնութիւններ, որ նա ստացել է իբր Հռոմում։ Այդտեղ մէջ բերուած են նոյնպէս և պ. Կրիսպիի խօսակցութիւնը իշ. Բիսմարկի հետ։ Նրա մէջ նոյնպէս յայտարարվում է, որ Լէօպօլդ Թագաւորը դաշն է կապել Գերմանիայի հետ առանց մինիստրների գիտութեան. ասում են, որ այդ դաշնագիրը կազմում է չորրնակութիւն 1831-ին Լէօպօլդ I Թագաւորի կապած դաշնագրին։

—Գերմանական ներքին գործերի մինիստր Պուտականմէրի տեղ, գերմանական լրագիրները կարծում էլին, որ կը նշանակուի մի յայտնի մէկը և առաջ էին բերում մի երկար անուանական ցանկ։ Բայց տեղեկանում ենք, որ այդ պատուոր յանձնել են նոյն մինիստրութեան կրտսեր քարտուղար Գէօֆֆուրտին։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԳՈՐԾԵՐ.—Ինչպէս արդէն հաղորդել ենք մի քանի անգամ, չերնոգօրիցների և ալբանցիների մէջ անընդհատ պատահող ընդհարումներն և պատերազմի ձև ստացող կռիւները մեծապէս վնասում էին այդ երկրների բնակիչներին՝ երկրին անդադար վտանգի մէջ պահելով և կառավարութիւններին հանգստութիւնները պատճառելով։ Այդ յարձակումներն մանաւանդ աւելի սաստկացան այս տարի, գարնան բացուելուց յետոյ։ Ոչինչ զի այդ խռովութիւններին վերջ տրուի, Թիւրքիան և Չերնոգօրիան պայմանաւորուեցան կազմել մի յանձնախումբ, որ պիտի քննէ այդ գործերը։ Այժմ Սկուտարիից հեռագրում են մայրաքաղաքի Թերթերին, որ այդ յանձնախումբը կազմվում է Պոդգօրիցայում։ Չանազան մանր ցեղերի պետերը վճռել են, որ այդ անդադար կրկնուող յարձակումնեըից առաւելապէս վնասուող կողմը պէտք է ստանայ իր վնասը կամ փողով կամ տաւարով։ Մտքերը կամաց-կամաց թէև խաղաղում են, բայց յարձակումները դեռ չեն վերջացել։ Այսպէս օրինակ, վերջերս կրկին կռուել է պատահում չերնոգօրիացիների և սկրէչլէք ցեղի մէջ՝ Ռուլցինեոյի մօտ, որ վրէժխնդրական զգացումից է առաջ եկել։ Չերնոգօրիայի կրկնակի Նիկողայոսը խիստ պատիժ է նշանակել խաղաղութիւնն վրդովողներին։

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիացիներին ներկայումս զբաղեցնող խնդիրներից մինը էլ առաջիկայ 1889 Թուին Պարիզում կայանալիք համաշխարհային ցուցահանդէսն է, որի մասին քանի հնար է մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու համար հիմնվում են առանձին Թերթեր. այդ Թերթերից մինն՝ «Journal de L'Exposition universell» անունով հրատարակուած է արդէն։ Ինչպէս արդէն երևում է, Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին պիտի մասնակցեն ոչ-պաշտօնական կերպով Իտալիան, Սպանիան, Աւստրիա-Ունգարական արդիւնագործների ահագին խումբեր, նոյնպէս և Բէլգիայից, Նիդերլանդիայից, Շվէյցիայից, Անգլիայից և Ռուսիայից, իսկ պաշտօնական կերպով պիտի մասնակցեն Միացեալ-Նահանգները, Մարօկկօն, Հարաւային Ամերիկայի հասարակապետութիւնն և Եապօնիան։ Ցոյս ունենն, որ Պարիզի այս ցուցահանդէսը մինչև այժմ Պարիզում եղած ցուցահանդէսներից ամենաաջողն է լինելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սպանական տօրբէ ադօրն երը.—Ներկայումս սպանական մի քանի ցուլամարտներ աջողութեամբ գործում են Ֆրանսիայում։ Այսպէս օրինակ, մօտերքս Նիժում ներկայացում էր տալիս հռչակաւոր տօրբէադօր (ցուլամարտ) Անջելօ Պաստօրը, ուր 20,000-ի չափ հանդիսականներ էր հաւաքել։ Հանդէսը թացուեց ճաշից յետոյ ժամը 4-ին։ Ճարպիկ ցուլամարտն իր օրինակելի քաջութեամբ մեծ ոգևորութիւն պատճառեց հասարակութեան։ Չինգերորդ ցուլի հետ կռուելիս, նա յանկարծ, ինչպէս երևաւ, որ սլքուելով վայր ընկաւ։ կատաղած գազանն անմիջապէս նրան բարձրացրեց իւր եղջիւրների վրայ, բայց Ճարպիկ տօրբէադօրը մի հմարձակ ոստիւնով թռաւ շրջապատից և ազատուեց անխուսափելի մահից։

***

Դատաստանական մի գործ.—Մօտերքս Բուդա-Պեշտում քննվում էր մի գործ։ Ցիմիտա անունով մի ունգարացի, որ պատկանում է լաւ ընտանիքի, Տրիեստում սպանում է մի 17 ամեայ կոմի, կողոպտում է նրա վողերը և դիակը պահում է մի արկղի մէջ, որ 6 շաբաթ մնում է իւր սենեակում։ Դատարանում եղեռնագործը պահպանում է իւր սառնարիւնութիւնը։ Միայն իւր մօր նամակը, որով նա հրաժարվում էր նրան մայր կոչուելուց, նրան արտասուելու պատճառ եղաւ։ Այնուհետև ներս մտցրին դատարան նրա հօրը, որ ներկայացով իւր որդուն, Թէքեց նրա երեսին և կանչեց. «Հրէշ. սատանայ. Թող քո մօր անէծքը և իմ որդու քոյրերի անէծքներն սատակեն քեզ»։ Մեղադարտը սարսափած ետ-ետ էր քաշվում։ Նախագահը նկատեց. «Ես չեմ կարող Թոյլ տալ այդպիսի բան։ Մարդկային տեսակէտից ես հասկանում եմ ձեր զայրոյթը, բայց մեղադարան այստեղ իմ հովանաւորութեան տակ է գտնվում»։ Ցանցագործ պաշտօնեան աշխատում էր յանցագործին արդարացնել՝ առարկելով, Թէ նրա մտաւոր ընդունակութիւնները տեղը չեն։ Ցիմիտը դատապարտուեց մահուան. Նա սառնարիւնութեամբ ընդունեց այդ դատավճիռը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունվ.—Հրատարակուած է հետևեալ բարձրագոյն հրամանը.—1888 Թուին պետութեան բոլոր մասերում, բանակը և նաւատորմիղը լրացնելու համար ծառայութեան կոչել 250,000 հոգի, ի Թիւս որոնց և նրանց, որոնք առաջիկայ զինուորակոչին կը ներկայացնեն նախկին ժամանակների բէկրուտային ստացական ծառայութիւնից ազատուելու համար։ Թերէքի և Կուբանի չերքէզների Անդրկովկասեան բնիկներից, Կովկասում կազմակերպող զօրքերի համար վերցնել 2600 հոգի, ի Թիւս որոնց և 100 հոգի օսեր՝ Թերէքեան կօզակ գնդի համար։

Կայսերական «Յարեվնա» շոգենաւը յունիսի 27 և 28-ին կանգնած էր Աբօի մօտ, Եուննֆրոզունդում։

Այսօր Պետերբուրգ է վերադառնում ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։

ՍԻՄԲԻՐՍԿ.—Յունիսի 29-ի գիշերն այրուեց քաղաքի մի մասը Գվօրցօվայա փողոցից մինչև Ստարօ-Վէնեց փողոցը։ 200-ից աւելի տներ այրուեցան։

ՊԱՐԻԶ.—Երէկ պատգամաւորների ժողովին առաջարկուեց կաթոլիկական բոլոր կրօնական ընկերութիւններն խափանելու մասին արմատականների առաջարկութիւնը, որին առիթ է տուել այդ կրօնական միաբանութիւններից մինի Սիտօլի երկրագործական ուսումնարանում կատարած անբարոյական գործառնութիւնները։ Պատգամաւորների ժողովը 264 ձայների մեծամասնութեամբ 219 ձայնի դէմ ընդունեց այդ առաջարկի քննութեան անյետաձգելի լինելը։

Բուլանժէն երէկ պատգամաւորների ժողովին առաջարկեց ժողովրդին արձակելու առաջարկը։

Նիստը խիստ աղմկալի էր. Բուլանժէին հակաճառում էին մինիստր-նախագահ Ֆլօկէն և պատգամաւորների ժողովի նախագահ Մելինը։ Վերջ ի վերջոյ, պատգամաւորների ժողովը, Մելինի առաջարկութեամբ, վճռեց կարգի կոչել Բուլանժէին և ժողովի նիստը մինչև երկուշաբթի յետաձգել։

Ինչպէս լսվում է, Բուլանժէն Ֆլօկէին մենամարտի է հրաւիրել։

ԲԵՐԼԻՆ. — «Nordd. Allg. Zeit.»-ը հաղորդում է, որ սերբիական կառավարութիւնը մօտերքս ղրկել է պրուսական կառավարութեան խնդրելով տալակցել սերբիական տասներկու տարեկան թագաժառանգին Սերբիա բերելու գործին։ Այդ խնդիրը կը յարգուէր նոյն իսկ այն ժամանակ, եթէ այդ անողը մասնաւոր անձ լինէր. իսկ ներկայ հանգամանքում գործը ոչ միայն հայրական իրաւունքի գործադրման է վերաբերում, այլ և Սերբիայի թագաւորի արքայական իրաւունքներին՝ իւր որդու և հպատակի վերաբերմամբ։ Պրուսական վարչութիւններն սերբիական թագաւորանդին յանձնել թագաւորի հաւատարմատարին. թագուհին այդ մերժեց և պրինցին հեռացնելու համար գործադրուելու ո և է միջոցներին զօրով ընդիմադրելու տրամադրութիւն ցոյց տուեց։ Ասում են, որ այդ նպատակով սպասաւորներին զէնքեր են տուել։ Արքայական իշխանութեան համար ամենևին ցանկալի չէ, որ նրա հեղինակութիւնն իւր սեպհական երկրում չճանաչուի և իւր վրայ ընկնի սերբիական արքայական տան ներքին կռիւները, պրուսական ոստիկանութեան ձեռքով վիճաբանդէնում լուծուելու պատասխանատուութիւնը. այդ պատճառով ցանկալի էր, որ Սերբիայի թագուհին, եթէ նա ցանկանում է դիմադրել պրուսական բարձրագոյն իշխանութեան, իւր ապրուստի համար տեղը Գերմանիայից դուրս փնտռէր։

ԼՕՆԴՕՆ.—Լօրդերի ժողովը երէկ միաձայն և առանց վիճաբանութեան կառավարութեան վստահութիւն յայտնեց Իրլանդիայի վերաբերմամբ նրա բռնած քաղաքականութեան համար։

ՏՈՒԼՕՆ.—Ուղղիչ ոստիկանական դատարանն, հինգ օրուայ քննութիւնից յետոյ, անմեղ ճանաչեց մեծ քանակութեամբ գինի վաճառողին, որ դատաստանի ենթարկուած էր թունաւոր գինի և ուրիշ առողջութեան համար վնասակար նիւթեր պարունակող խմիչքներ ծախելուն համար և նրան դատապարտեց միայն, անհոգութեան համար, 20 օրուայ բանտարկութեան և 100 ֆրանկ տուգանքի։

ՊԱՐԻԶ.—Այսօր առաւօտ տեղի ունեցած մենամարտի մէջ, առաջին անգամ Բուլանժէն թեթև վերք ստացաւ ձախ ոտքին, իսկ Ֆլօկէն թեթև վերք ստացաւ աջ թևի վրայ. երկրորդ անգամ Ֆլօկէն թեթև վերք ստացաւ ձախ ծծի վրայ, իսկ Բուլանժէն ծանր վերք ստացաւ վզի վրայ. նրա շընչառութիւնը բաւական դժուարացել է և դեռ կարելի չէ հետևանքը որոշել։

ՎԻՍԲԱԴԷՆ.—Սերբիական թագաժառանգն այսօր, ժամը 11-ին, յանձնուած է ոստիկանական նախագահին։

ՎԵՆՆԱ.—Սերբիական թագաժառանգը վաղը, առանձին գնացքով կ'ժամանէ տեղս և, առանց կանգ առնելու, կուղևորի Սերբիա. նրան դիմաւորելու կ'գնայ Վեննայի սերբիական դեսպանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունվ.—Հրատարակուած է պետական խորհրդի հետևեալ կարծիքը.—Ցամաքային զօրքի մէջ, վիճակով ընտրուողների համար ծառայութեան ընդհանուր ժամանակամիջոցը որոշվում է 18 տարի, որից 5 տարին իսկական ծառայութեան մէջ, իսկ 13-ը՝ պահեստի։ Առաջին կամ երկրորդ կարգի ուսումնարաններ, գիմնազիօնի վեց դասարաններն, բէալական ուսումնարաններն կամ հոգևոր սեմինարիայի երկրորդ դասարանն աւարտողներն իսկական ծառայութեան մէջ մնալու են 2 տարի, իսկ պահեստում՝ 16 տարի։ Երրորդ կարգի ուսումնարան աւարտողներն իսկական ծառայութեան մնալու են 3 տարի, իսկ պահեստում 15 տարի։ Ժողովրդական—տարրական ուսումնարանն աւարտելու վկայական ունեցողները, կամ չորրորդ կարգի ուրիշ ուսումնարան աւարտողները, ցամաքային զօրքի մէջ, իսկական ծառայութեան մէջ պիտի մնան 4 տարի, իսկ պահեստի մէջ՝ 14 տարի, իսկ նաւատորմղի մէջ ծառայելու միջոցին՝ վեց տարի իսկական ծառայութեան մէջ։ Խաղաղ ժամանակն իսկական ծառայութիւնից ազատուելով և բանակի պահեստի մէջ են հաշվում 18 տարի՝ նրանք, որոնք ունին բժշկական գիտութեան աստիճան, բժիշկները, կենդանաբուժական գիտութիւնների կամ ֆարմացիայի մագիստրոսները և կամ կենդանաբոյժները, կայսերական գեղարուեստական ճեմարանի այն պանսիօնէրները, որոնք արքունի հաշուով ուղարկուած են արտասահման և դասախօսում են 53-րդ յօդուածում յիշատակուած ուսումնարաններում և այն ուսումնարաններում, որ յիշեալ յաւելուածի մէջ չեն յիշուած. ուսումնարանների շատում հաշուող ուսուցիչներն և շատում հաշուող նրանց օգնականները և հոգևոր սեմինարիաների և գպրոցների վերակացուները։

Երէկ կիեվ ուղևորեցաւ ս. սինոդի կանցելիարիայի կառավարիչ Սաբլերը, Ռուսիայի մկրտուելու 900 ամեակի տօնախմբութեան պատրաստուելու համար։

Երէկ Պետերբուրգի հաշտարար համագումարն որոշեց.—առանց հետևանքի թողնել մի թղթավաճառի գանգատը, որին հաշտարար դատաւորը, իսկական թէյի փոխարէն կապօրեան կոչուած թէյ վաճառելուն համար երեք շաբաթուայ բանտարկութեան է դատապարտել և պահանջել է 20 ր.՝ թէյի ընտութեան համար։

ԲԵՐԼԻՆ.—Վիլհէլմ կայսրն երէկ ծովային նշանագլխատով դուրս եկաւ դէպի Կիլ։

ՎԻՍԲԱԴԷՆ.—Երէկ կէսօրին, սերբիական թագաժառանգը ուղևորեցաւ Բէլգրադ, իսկ երեկոյեան Վիեննա ուղևորեցաւ Նատալիա թագուհին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բօրսան՝—Թիֆլիսի հողային բանկի հիմնատոմսը՝ 98¼ ր. գն., Քուրթայիսինը՝ 98 ր. գն., Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան օբլիգացիաները՝ 82 ½ ր. գն.

ԿՐՕՆՇՏԱԴՏ.—Գերմանական նաւախումբն այստեղ սպասվում է յուլիսի 7-ին։

ԿԻԼ.—Այսօր ժամը 11-ին Վիլհէլմ կայսրն «Հօհէնցօլէրն» շոգենաւով ծով դուրս եկաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվ. — «Граждан.»-ը հաղորդում է, որ գերմանական կայսրին դիմաւորելիս պիտի մասնակցեն—գործնական և մանր չափի նաւերի խումբը և ծովային ուսումնարանի գընդի նաւերը։ Բոլոր այդ նաւերը կը հաւաքուին Կրօնշտադտի նաւահանգիստը։ Կայսրի մօտ կը լինին գեներալ-մայոր Գլինցա Մավրին, Նորին Մեծութեան հետևորդ գեներալ-մայոր իշխան Օրժնով և Ֆըլիգել-ադիւտանտ գրաֆ Շուվալով. Վիլհէլմ կայսրը կիէնի Պետերհօֆի մեծ պալատում։ Կարծում են, որ Վիլհէլմ կայսրը Ռուսիայում չորս օր կը մնայ։

ՊԱՐԻԶ.—Ազգային տօնն անցաւ սովորական կարգով։ Հասարակապետութեան նախագահ Կարնօն հանդիսին գնալիս՝ «Կեցցէ Կարնօն» աղաղակներին խառնվում էին կեցցէներ ի պատիւ Բուլանժէի։ Նախագահը հանդէսից վերադառնալիս, բուլանժական ցոյցերը կրկնուեցան. մի քանի ձերբակալութիւններ եղաւ։ Երեկոյեան բանկէտում, որ արքել էր քաղաքը, Կարնօն խօսեց մի ճառ, որի մէջ պաշտպանում էր հասարակապետական հաստատութիւններն պաշտպանելու անհրաժեշտութիւնը և չգրաւուել աղմկալի և վտանգաւոր դիպուածներով։

Բուլանժէի դրութիւնը բաւական ծանր է. շնչառութիւնը ծանրացել է, բայց գարկերակը համարեա թէ կանոնաւոր է։

ՎԵՆՆԱ.—Վիեննայի կայսերական Գեգել պալատում պատրաստութիւններ են տեսնում սեպտեմբերին գերմանական կայսրին ընդունելու, որ գալու է աւստրիական կայսրի և թագաժառանգ Րուդոլֆի հետ որսի գնալու։

Տեղս ժամանեց Նատալիա թագուհին։ Սերբիական դեսպանը թագուհուն չդիմաւորեց, բայց երկաթուղու կայարանում նրան

ողջունեց բազմաթիւ ամբոխը, որ բաղկացած էր գլխաւորապէս սլավեաններից։

ՊԱՐԻԶ.—Այստեղ եկաւ Չերնոգօրիայի իշխանը։

Բուլանժէի առողջութիւնը այլ եւս վտանգաւոր չէ, ջերմը դադարեցաւ։ Մենամարտութիւնն այնպէս չկատարուեցաւ, ինչպէս նկարագրուած են լրագիրները.—Ֆլօկէն նահանջելիս, քիչ էր մնում, որ ընկնէր. բարձրանալով, նա բարձրացրեց իւր աջ ձեռքը. այդ րոպէին Բուլանժէն իւր հակառակորդին վիրաւորեց՝ կրծքի ձախ կողմից և այդպէսով ինքը պատահեց Ֆլօկէի սուրին։ Այդ երեւում է հենց նրանից, որ վէրքը ներքևից վեր է հասցրած։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յունիսի.—Երէկ երեկոյեան Պետերբուրգ ժամանեցին՝—Բերլինի ռուսական դեսպան գրաֆ Շուվալովը և Պետերբուրգի գերմանական դեսպան գեներալ Շվէյնիցը։

«Кронштад. Вѣст.»-ի ստացած տեղեկութիւններին նայելով, «Ցարեվնա» շոգենաւն ուղևորեցաւ դէպի արևելք։

ՄՕՍԿՎԱ.—Մեծ Իշխան Վլադիմիրը Ալէքսանդրովիչը և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնան երէկ երեկոյեան ուղևորեցան Պետերբուրգ։

ՐԸՐԻՆՍԿ.—Վօլգայի ջուրն սկսում է պակասել։ Ջրի քանակութիւնն էր 10 արշին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

1 Յունիսի։

Լօնդօն 105,50 ր., 104,80 ր., 105,25 ր.
Համբուրգ 51,70 ր., 51,60 ր.
Պարիզ 41,70 ր., 41,50 ր. 41,60 ր.
Պօլուխմպերիալ . 8 ր. 43 կ. սակ.
Մաքս. կուպօն 168 ր. — կ. սակ.
Ազծաթ . . . . 1 ր. 33 կ. սակ.
Բօրսային դիս. 6 և 7¼%
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 98 ր. 87 կ. սակ.
2-րդ . . . . . 98 ր. 62 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ր. 25 կ. գն.
4-րդ . . . . . 98 ր. 50 կ. գն.
5-րդ . . . . . 98 ր. 12 կ. գն.
6-րդ . . . . . — ր. — կ. սակ.
Վերջին 4% . 82 ր. 37 կ. սակ.
փոխառութիւնը
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 99 ր. 62 կ. սակ.
2-րդ . . . . . 98 ր. 75 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ր. 75 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան
տոմսեր . . . 271 ր. 50 կ. սակ.
2-րդ . . . . . 251 ր. 75 կ. սակ.
5½% ընծաեր . 101 ր. — կ. գն.
Ոսկէ ընծա . . 185 ր. 50 կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկերը.
օբլիգ. . . . — ր. — կ. Ծ.
Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը խաղաղ է։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ախալցխա, Աբևլեն.—Ստացանք, կարդացինք և... չէ հրատարակուիլ։ Ինչու՞ այդքան խիստ լինել. ուսուցչական խումբը դեռ նոր է կազմակերպուել՝—մի տարի է, որ գործում է. Թողէք մնան 3—4—5 տարի՝ որպէս զի կարելի լինի մի եզրակացութեան գալ։

—

Նոքաշէն, Մ. Ա.-ին.—Ձեզ պատուիրած նամակ ենք ուղարկել. ո՞չինչ չէք գրում գործի մասին։ «Նամակ ընկերին»՝ անյարմար է. մենք կռւում ենք գաղթականութեան դէմ՝ իսկ դուք... եթէ մի տեղ անյարմար է երկրագործութեան համար, անշուշտ մի ուրիշ տեղ կարելի է գտնել, բայց ոչ Անդրկասպեան երկրներում։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումից Օզեսայի և Կ. Պօլսի միջև։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթինեը.—կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մըտնում է Սուխումի և Նովոռօսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթինեը.—կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսսիյսկի և կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթինեը.—Երեկոյեան արտաստհմանեան գնացքով կ. Պօլիս։

Բաթումի գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ կերճի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, կերչի և Նովոռօսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտը կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթինեը. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու, որ մտնում է և Սուխում։

Ուրբաթ՝—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բուհկլեր-Անատոլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է Փոթի

Չորեքշաբթի և Կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաև Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են փոթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները։ Նիկոլաեվից Օդեսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստօպօլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք փոթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստօպօլն և Օդեսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան։

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիրակական ճանապարհով
1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգշաբթի տեղ ունեցող կարգը առաւօտեան ժամը 9-ին, Մէյթի կայարանում գիշերելով. հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդաւար կայարանում և Վլադիկավկազ հասնելով միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգուս տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, միւս օրը հասնում են թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Աղստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ԵՐՈՒԻԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՄԱՏԹԷՈՍ Ա. ԱԽՈՒՄԵԱՆՑ

Ընդունում է առաւօտեան ժամը 8-ից մինչև 10-ը, երեկոյեան՝ ժամը 4-ից—8-ը։

Գօլովինսկի, տուն Գօրբոժանսկու։ 3—2

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ, որ դասախօսել է Հայոց միջնակարգ ուսումնարաններում և ունի Ս. Էջմիածնի ձեմարանի մրցանագիր (դիպլօմ), ցանկանում է ուսուցչութեան պաշտօն վարել Հայոց ուսումնարաններում։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող բոլոր առարկաներից։

Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

(Խ.) 8—7

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցում, կամենում է գաւառներ գնալ ուսուցչութեան պաշտօնով։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող առարկաները. բացի այդ աշղոյակ կերպով պատրաստում է երգեցիկ խումբ։ Հասցէն. Тифлисъ, Левону Меликъ-Адамянцу, Большая Грязная ул., д. № 17. յանձնել Պ. Վ.-ին։

6—5

!!ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂՏԻԿԻՑ ԵԻ ՆՄԱՆՈՒԹԻՒՆԻՑ!!

Պրօվիզօր Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ

ՕՃԱՌ

Գլխի ցաւերուն օչնչացնելու համար։ Նպաստում է մազի կանոնաւոր աճման և դադարեցնում է նրանց թափուելը։

Հոտի գինը է 30 կ. երկոսի հոտը 50 կ.

Վաճառվում է—Թիֆլիսում՝ դեղատնային ապրանքների վաճառակատարութեան Կովկասեան Ընկերութեան մօտ, Ա. Ս. Յովհաննովի մօտ և Գր. Անդ. Պապովի մօտ։

Բէշտում՝ Խահակ Մելիք Յովսէփեանցի մօտ։

Բագուում՝ Բէկիչեի մօտ։

Պահեստը՝ Մոսկվա, Մաշկով աիբեուլօկ, տ. Մերկուլովի։

!!Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ ՕՃԱՌԸ ՊԱՀԱՆՋՑԷՔ ՄԻԱՅՆ!!

(М. 42354) 10—10

ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ՏՆԵՐՈՒՄ

Յանկանում է ունենալ մի երիտասարդ, որ լաւ ուսումնասիրել է իւր սեանդելու առարկաները։

Դասախօսում է Հայոց լեզու, Ֆրանսերէն, Գերմաներէն, Հաշուապահութիւն, Մաթեմատիկական բոլոր առարկաները միջնակարգ դպրոցների համար։

Հասցէն և պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

10—1

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որ նոր կատարելագործել է «Գլօզինսկու» մեթոդը, յանկանում է Հայոց ուսումնարաններում կար ու ձեւի և ձեռագործի դասեր ունենալ՝ որ քաղաքում եւս լինի։

Պայմանները յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

6—2

ՄԻ ԵՐԻՏՍԱՐԴ, որ աւարտել է Ս. Էջմիածնի ձեմարանն և թեմական դպրանոցներում վարել է ուսուցչութեան պաշտօն, ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ ամառնային արձակուրդի ամիսներում։ Աշակերտներին պատրաստում է միջնակարգ դպրոցների համար։ Յանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

(Ա.) 10—7

ԽԱՐԿՕՎ

„ՐՕՍՍԻԱ“ „ԷՐՄԻՏԱԺ“

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑՆԵՐ

Երկուսն էլ ամենալաւ՝—Եկատերինօսլավսկի փողոցի վերայ։

Սենեակները բոլոր յարմարութիւններով 1 ր. մինչև 10 ր. օրը. բնաւանիքի համար բնակարաններ. վաննաներ. Կառքեր՝ բոլոր գնացքների համար։ Օրինակելի խոհանոց.—Ճաշ՝—60 կ., 80 կ., 1 ր., 2 ր. և à la carte. Նախաճաշը 30 կ., ընթրիքը՝ 40 կ. բաժինը։ Ամենալաւ վաճառատների և իւր սեփական պատրաստած գինիները։ Ունի իւր կաթնային տնտեսութիւն և լուացարան։ Անթասիր սպասաւորները. «ՐՕՍՍԻԱ-յում առաջնակարգ պանդոկ՝ աստիճին էլեկտրական օրկեստրիօն։

Հիւրանոցների տէր՝ ՆԱՊԵՓՈՆ ԲՈՒՖ

(М.) 26—11

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ

ԿԵՉՈՒ ԲԱԼԱՄԱՆ

Մէկ սրսուալի գինն է 1 ր. 65 կոպէկ։

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՕՊՊՕ ՊՕՄԱԴ և Կօլդ-Կրէմից լաւ է մի ամանը 1 րուբլի.

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ԲՕՆԶԵԱՆ ՕՃԱՌ ½ կտորը 50 կ., ½ կտորը 35 կ.

Ուղարկելու ծախսը առանձին է հաշվում։ Վաճառվում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղատներում։ Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. ԱՒԻՐԻԽԻ մօտ, Պետերբուրգում, Սարէմեանսկայա, 4.

ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան, և Գրիվնակի մօտ։ 46—37

(М.)

ՉԷՅԹՈՒՆՅԱՆԵՐԻ ՕՊՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջեւանի Ջրիկներեի եղանակ.
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մօլդավական պար.

Գինն է 1 րուբլի. Ձանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ
для фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ.
4) Нападеніе.
5) Армянскій мотивъ.
6) Тифлисская зурна.
7) Курдинскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(Խմ.) X—38

MOTIFS ORIENTEAUX
Pour le Piano

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Іюля 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկօլի

Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахов